U Power

Տեղեկագիր կանանց սոցիալական ձեռներեցության մասին

ՆՈՅԵՄԲԵՐ 2024 | N. 4

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԻՌԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Ձեռքբերման նշանավորումը

Ուրախ ենք կիսվելու Ս.POWER ծրագրի հաջողված եզրափակիչ կոնֆերանսի մասին, որը տեղի ունեցավ նոյեմբերի 6-ին Քելսում (Meath վարչաշրջան, Իռլանդիա):

Meath Partnership-ի կողմից կազմակերպված այս կարևոր իրադարձությունը համախմբեց ծրագրի գործընկերներին, մասնակիցներին և շահագրգիռ կողմերին ամբողջ Եվրոպայից՝ ինչպես օֆֆլայն, այնպես էլ առցանց՝ նշանավորելով կանանց ձեռներեցությանն աջակցելու մեր համատեղ ճանապարհորդության գագաթնակետը:

ԿԻՍՎԵԼՈՒ ԵՒ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՕՐ

Համաժողովի ժամանակ մեր միջազգային գործընկերները ներկայացրեցին U.POWER ծրագրի կարևոր ձեռքբերումները:
Միջոցառմանը նաև ելույթ ունեցան փորձագետ բանախոսներ՝ իրենց ուշագրավ զեկուցումներով.

- Շերոն Հյուզը «Առաջնորդության Ակադեմիայից» կիսվեց արժեքավոր պատկերացումներով՝ «Պատրաստել ինքներդ ձեզ հաջողության հասնելու համար» թեմայով,
- Մարջան Բոերսը ներկայացրեց կարևոր տեղեկություններ «LEADER ծրագրի ֆինանսավորման» վերաբերյալ,
- իսկ Ֆիոնա Դույգնանը անդրադարձավ «Կայուն զարգացման նպատակներին և սոցիալական ձեռնարկությանը»:

Օրվա կարևոր իրադարձությունը U.POWER ծրագրի մասնակիցների պանելային քննարկումն էր, որտեղ կին ձեռներեցները կիսվեցին ծրագրի շրջանակներում իրենց անցած ոգեշնչող ճանապարհով և փորձով: Վկայականների հանձնման արարողությունը նշանավորեց բոլոր այն մասնակիցների ձեռքբերումները, որոնք նպաստել են ծրագրի հաջողությանը:

«Չկա որևէ սահման նրան, ինչին մենք՝ որպես կանայք, կարող ենք հասնել: Երբ կանայք աջակցում են միմյանց, անհավանական բաներ են տեղի ունենում»:

Շերիլ Սանդբերգ

ԲԱՑԱՀԱՅՏԵ՛Ք ՄԵՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Մեր երկամյա ճանապարհորդությունը հագեցած էր նախաձեռնություններով, նոր հնարավորություններով և հետաքրքիր զարգացումներով: Պատրաստ ենք կիսվել Ձեզ հետ այս ամենով:

Մենք գործարկել ենք մեր սոցիալական մեդիայի էջերը **Instagram**-ում և **Facebook**-ում և ծրագրի **պաշտոնական կայքը** www.upowererasmus.com, որտեղ դուք կգտնեք նորություններ և պատմություններ U.POWER-ի մասին... բաց չթողնե՛ք:

u.power

u.powerproject

Co-funded by the European Union

KA220-ADU-992AC3A1